



ՍԱՄՎԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԴՏՀ տնտեսագիտության տնտեսության ամբիոնի ասիստենտ,
ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության
վարչության ավագ մասնագետ, տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում հետազոտվել է ՀՀ բնակչության թվի կրճատման հիմնահարցը, և այդ համատեքստում առանձնացվել են սոցիալական քաղաքականության հետ կապված խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Մասնավորապես, առաջարկվել է վերանայել նվազագույն սպառողական զամբյուղի, աղքատության շեմի, նպաստների, կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձի հաշվարկման մեխանիզմները՝ հիմք ընդունելով «Հիմնական պահանջմունքների բավարարման» և «Կարողությունների ու հնարավորությունների զարգացման» մոտեցումների զուգակցումը: Առաջադրվել են փաստարկներ, համաձայն որոնց՝ գործազրկության նպաստի տրամադրման դադարեցումը նպատակահարմար չէր, և այն կարող է գործել ակտիվ սոցիալական քաղաքականության ծրագրերի հետ միասին: Առողջապահական ծառայությունների հասանելիության ընդլայնման տեսանկյունից քննարկվել են համավճարի սկզբունքով գործող առողջության ապահովագրության համակարգի ներդրման հնարավոր տարբերակները, իսկ աճող սոցիալական ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ եկամտային հարկի պրոգրեսիվության ապահովման և ծախսերի հասցեականության բարձրացման հարցերը:

Հիմնաբառեր. կենսամակարդակ, ծնելիություն, արտագաղթ, բնակչության թիվ, տնտեսական զարգացում, սոցիալական քաղաքականություն, եկամտային հարկ

JEL: J11, O15, H55, H21

Ներածություն: Ժողովրդագրական իրավիճակը միշտ էլ եղել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Սա պայմանավորված է հատկապես նրանով, որ աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության ընդհանուր թվի մեծ մասը: Այս ուղղությամբ շարունակական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս բացահայտելու ոլորտում առկա խնդիրները, գնահատելու դրանցից բխող հետևանքները և գտնելու դրանց հաղթահարման ուղիները: Այսպես, օրինակ, աշխատունակ տարիքի բնակչության թվի անընդհատ կրճատումը կարող է հանգեցնել խոր սոցիալ-տնտեսական ճգնաժամի: Սրանից խուսափելու նպատակով կարևորվում է բազմակողմանի հետազոտությունների հիման վրա մշակված և արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացումը, որը պետական կարգավորման հիմնական միջոցներից է:

Թեման հատկապես արդիական է Հայաստանի համար, քանի որ զանգվածային գործազրկության և աղքատության հետևանքով միգրացիայի մնացորդը շարունակում է բացասական լինել՝ հանգեցնելով աշխատանքային ռեսուրսների կրճատմանը և փոքրացնելով տնտեսական առաջընթացի ներուժը: Պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունն իր հերթին ունի մի շարք խնդիրներ: Մասնավորապես, նպաստները և կենսաթոշակները միջինում փոքր գումարներ են կազմում և չեն կարող բավարարել բնակչության հիմնական պահանջմունքները: Սա պայմանավորված է ինչպես պետական բյուջեի սակավ միջոցներով, այնպես էլ ծախսերի արդյունավետության ոչ բարձր մակարդակով:

Գրականության ակնարկ: Ժողովրդագրական իրավիճակը և աշխատանքային ռեսուրսների առկայությունը տնտեսական առաջընթացը պայմանավորող հիմնական գործոններից են: Եթե զարգացման տնտեսագիտության ձևավորման սկզբնական փուլում մասնագետների զգալի մասը ֆինանսական կապիտալը դիտարկում էր որպես երկրների աղքատության հաղթահարման հիմնական միջոց (հաճախ առաջարկվում էր ներգրավել նաև արտաքին պարտք)¹, ապա հետագայում առաջադրվեց տեսակետ, ըստ որի՝ այդ գործոնը կարող է լինել աշխատանքի ավելցուկային առաջարկը: Հեղինակների կարծիքով՝ այն կարող է տնտեսության ավանդական հատվածից փոխանցվել արդի արդյունաբերության ոլորտ և նպաստել տնտեսական աճին ու արտադրողական զբաղվածության ավելացմանը²:

Հարկ է նշել, որ, իրենց հերթին, ժողովրդագրական իրավիճակը, հետևաբար նաև աշխատանքային ռեսուրսները կրում են սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությունը: Մասնավորապես, եկամտի ցածր մակարդակը կամ դրա բացակայությունը արտագաղթի ճանապարհով կարող են հանգեց-

¹ Արտաքին պարտքի ներգրավման նշված մոտեցման խնդրահարույց կողմերի վերլուծությունը տե՛ս **Sachs J.**, Theoretical Issues in International Borrowing, Princeton Studies in International Finance, Princeton University, 1984, N 54, **Sachs J.**, The Debt Overhang of Developing Countries, in R. Findlay (ed.), Debt, Stabilization and Development: Essays in Memory of Carlos F. Diaz-Alejandro, Oxford: Blackwell, 1989, **Reinhart M. Carmen, Rogoff S. Kenneth**, This Time is Different, Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, 2009, էջ 14-20:

² Տե՛ս **Lewis A.**, Economic Development with Unlimited Supplies of Labour, The Manchester School, 1954, Vol. 22, No. 2, էջ 139-191, **Ranis G., Fei J.**, A Theory of Economic Development, The American Economic Review, 1961, Vol. 51, N 4, էջ 533-565:

նել աշխատունակ բնակչության թվի կրճատմանը՝ խաթարելով երկարաժամկետ և կայուն զարգացման հեռանկարները:

Այստեղ հարց է առաջանում, թե ինչպիսին պետք է լինի պետության դերը սոցիալական հիմնահարցերի լուծման, որի միջոցով նաև աշխատանքային ռեսուրսների բարելավման գործում: Նախ նշենք, որ պետական կարգավորման (այդ թվում՝ սոցիալական քաղաքականության) արդյունավետության վերաբերյալ կարծիքները տարբերվում են: Հատկապես հասարակական ընտրության և ինստիտուցիոնալ տնտեսագիտության ներկայացուցիչներից շատերն են անդրադառնում դրա հետ կապված խնդիրներին: Մասնավորապես, ըստ *Ջ. Բյուքենենի*, քաղաքականության մեջ ևս դրսևորվում է տնտեսական շահը: Հեղինակը գրում է, որ այն անհատների միջև փոխանակության բարդ հարաբերությունների համակարգ է, որտեղ փորձում են ապահովել անձնական նպատակների իրականացումը³: Ժամանակակից պայմաններում սա հաճախ կարելի է նկատել, օրինակ, երբ հանրային միջոցների զգալի մասն օգտագործվում է քաղաքական ռենտա ստանալու նպատակով, որը նեղացնում է արդյունավետ կարգավորման շրջանակը և նվազեցնում դրա հասցեականությունը:

Այս համատեքստում, սակայն, հարկավոր է նշել, որ *Ա. Սենը*, ով իր հետազոտություններում զարգացումը նույնացնում է ազատ գործելու կարողությունների ընդլայնման հետ, միաժամանակ կարծում է, որ պետական միջամտությունը մեծ ազդեցություն ունի սոցիալական խնդիրների լուծման առումով: Ըստ *Ա. Սենի*՝ դա չափազանց կարևոր է զարգացող երկրներում սոցիալական հնարավորությունների ստեղծման համար, իսկ ժամանակակից հարուստ երկրների անցյալում նկատելի է կրթության, առողջապահության և այլ ոլորտներում պետական քաղաքականության պատմությունը, որը բնակչության մեծամասնությանը թույլ տվեց օգտվել տնտեսական առաջընթացից⁴:

Ջ. Սփիգլիցն իր «Անհավասարության գինը» գրքում նշում է, որ պետական կայուն կարգավորման պայմաններում ԱՄՆ-ում արձանագրված տնտեսական աճի արդյունքներից օգտվում էին հասարակության բոլոր հատվածները, սակայն 1970-ական թվականներից հետո ապակարգավորմանը և սոցիալական պաշտպանության համակարգի թուլացմանն ուղղված միջոցառումները հանգեցրեցին շուկայական տնտեսության գործառույթների խեղաթյուրմանը և անհավասարության մակարդակի խորացմանը⁵:

Ընդհանրացնելով վերոնշյալ հեղինակների աշխատանքների ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է պնդել, որ թեև պետությունը կարող է ձախողվել, սակայն դրա կարգավորումից հրաժարվելը ծայրահեղ տարբերակ է: Ազատ շուկայական հարաբերություններն անհրաժեշտ են տնտեսական առաջընթացի, իսկ պետության միջամտությունը՝ սոցիալ-տնտեսական խնդիրների առաջացումը կանխարգելելու կամ դրանք լուծելու համար:

Այսպիսով, մի կողմից հաշվի առնելով տնտեսական զարգացման գործում աշխատանքային ռեսուրսների կարևորությունը, մյուս կողմից՝ ՀՀ բնակ-

³ Տե՛ս **Buchanan J.**, Prize Lecture, The Constitution of Economic Policy, 1986, http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1986/buchanan-lecture.html:

⁴ Տե՛ս **Sen A.**, Development as Freedom, Oxford University Press, 2001, էջ 143:

⁵ Տե՛ս **Stiglitz J.**, The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, էջ 4-6, 9-12, 89-92, 226-229, 246-248:

չության թվի կրճատման հիմնահարցը՝ սույն հոդվածում հետազոտվել է ՀՀ ժողովրդագրական արդի իրավիճակը և դրա բարելավման համատեքստում առանձնացվել են սոցիալական քաղաքականության (պետական կարգավորման) հիմնախնդիրների լուծման ուղիները:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության, համադրման, մակաձության (ինդուկցիայի), արտաձման (դեդուկցիայի) և վիճակագրական մեթոդները: Դրանց ընտրությունը բացատրվում է նրանով, որ քննարկման առարկա հիմնահարցերը բազմաշերտ են և պայմանավորված են մի շարք գործոններով: Այս մեթոդների միջոցով նախ ներկայացվել է ՀՀ սոցիալ-տնտեսական պայմանների և ժողովրդագրական իրավիճակի փոխազդեցությունը: Ուսումնասիրությունը հիմնվել է այն սկզբունքի վրա, որ երևույթները միմյանց հետ կապված են ինչպես ուղիղ, այնպես էլ հակադարձ կապերով: Նշված եղանակներով առանձնացվել են բնակչության թվի շարժընթացի հիմնական միտումները և այն հիմնախնդիրները, որոնց լուծումը սոցիալական քաղաքականության առաջնահերթություններից է: Այնուհետև անդրադարձ է կատարվել ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի գլխավոր բաղադրիչներին, ինչպես նաև ոլորտին ուղղվող ծախսերի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներին:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել տարբեր հեղինակների՝ սոցիալ-տնտեսական հիմնահարցերին և ժողովրդագրությանը վերաբերող գիտական աշխատանքները, ՀՀ օրենքները, ՀՀ վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպության և այլ կառույցների զեկույցները, ուսումնասիրությունները, աշխատանքային փաստաթղթերը և այլն: Վերլուծության համար տվյալների հիմնական աղբյուր են ծառայել ՀՀ ՎԿ հրապարակումները: Առավելապես կիրառվել են տարեկան ցուցանիշներ և ժամանակային շարքեր: Անհրաժեշտությունից ելնելով՝ վիճակագրական մեթոդների միջոցով ապահովվել է դրանց համադրելիությունը:

Կատարված վերլուծության արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն, քանի որ ներկայացնում են ՀՀ-ում կենսամակարդակի և ժողովրդագրական իրավիճակի փոխադարձ կապը, ինչպես նաև սոցիալական քաղաքականության բարելավման ուղիները: Դրանք կարող են օգտագործվել մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնող կառույցների, ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական զարգացման հարցերով զբաղվող մասնագետների և ուսանողների կողմից:


Վերլուծություն

ՀՀ սոցիալ-տնտեսական պայմանները և ժողովրդագրական իրավիճակը

Կենսամակարդակը մեծ ազդեցություն ունի ընտանիքը բնութագրող ցուցանիշների վրա: Այսպես, առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքը սովորաբար բարձր է զարգացած երկրներում⁶, քանի որ երիտասարդները նախընտրում են շարունակել կրթությունը, ավելի շատ ժամանակ տրամադրել մասնագիտական զարգացմանը և այլն: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, այս ցուցանիշը ՀՀ-ում աստիճանաբար աճել է 1990-2018 թթ. (տղամարդ-

⁶ Տե՛ս Eurostat, https://ec.europa.eu/eurostat/tgm/table.do?tab=table&plugin=0&language=en&pcode=tps00014&fbclid=IwAR1oKB2DYj0XEcND6te-axE-3Mm_d2BQuCv3zLnsBmoBsCHCH9-wUJTUY:

կանց համար կազմել է շուրջ 30 տարեկան, իսկ կանանց համար՝ 27 տարեկան), սակայն այստեղ, ի տարբերություն բարեկեցության բարձր մակարդակ ունեցող երկրների, իրավիճակի վրա ազդող գործոնները հիմնականում այլ են: Երևույթը ՀՀ-ում պայմանավորված է հատկապես վատ սոցիալ-տնտեսական պայմաններով: Օրինակ, աղքատության մակարդակը թեև երկարաժամկետում նվազման միտում է ունեցել, սակայն այն դեռևս բարձր է և 2018 թ. կազմել է 23.5%⁷: Ավելին, ՀՀ բնակչության ամենահարուստ 20%-ը նույն թվականին տնօրինել է դրամական եկամուտների 46.0%-ը, իսկ Զինիի գործակիցը կազմել է 0.360⁸: Բացի դրանից, երիտասարդների գործազրկության մակարդակը կազմել է 26.7%⁹: Նշվածները հանգեցնում են «աղքատության ծուղակի» առաջացմանը՝ ազդելով ընտանիք ձևավորելու վերաբերյալ որոշումների վրա:




Գծապատկեր 1. Առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքը ՀՀ-ում, 1990-2018 թթ.¹⁰

Նշենք, որ ՀՀ-ում բարձր է նաև բնակարանների ծանրաբեռնվածության աստիճանը. մեկ սենյականոց բնակարաններում ապրող 1000 տնային տնտեսություններից 507-ում 2018 թ. առկա է եղել 2 և ավելի մարդ¹¹: Սա նույնպես առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքի աճի գլխավոր պատճառներից է: ՀՀ-ում գործում է «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական ծրագիրը, որի հիմնական նպատակը բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում արդյունավետ աջակցության համակարգի ներդրումն է: Այս ծրագրով անմիջապես կառուցապատողից բնակարանի կամ բնակելի տան ձեռք բերման համար վարկը տրամադրվում է առավելագույնը 7.5%-ով, որը չի սուբսիդավորվում: Երկրորդային շուկայից բնակարանի (բնակելի տան) ձեռք բերման համար հիփոթեքային վարկը տրամադրվում է առավելագույնը 9.5%-ով, որից Երևանում սուբսիդավորվում է 2.0 տոկոսային կե-

⁷ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2004 թ. և 2019 թ. հրապարակումներ, համապատասխանաբար էջ 47 և 42:
⁸ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2019, էջ 115:
⁹ Տե՛ս ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան ՀՀ-ում, Եր., 2019, էջ 32:
¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2006 թ. և 2019 թ. հրապարակումներ, համապատասխանաբար էջ 86 և 116:
¹¹ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 186:

տի չափով (այսինքն՝ վարկառուի համար վարկի տոկոսը կազմում է առավելագույնը 7.5%), իսկ ՀՀ մարզերում՝ 4.0 տոկոսային կետի չափով (այսինքն՝ այստեղ վարկի տոկոսը կազմում է առավելագույնը 5.5%)¹²: Բացի դրանից, հիփոթեքային վարկի ֆինանսավորման նպատակով ընտանիքներին պետական աջակցություն հատկացվում է նաև երեխայի ծննդյան դեպքում¹³: Այս կապակցությամբ նշենք, որ թեև նման ծրագրերը կարող են կրճատել վարկային բեռը, սակայն զանգվածային գործազրկության պայմաններում դրանցից օգտվողների շրջանակը խիստ սահմանափակ է:



Գծապատկեր 2. Ծնելիության ընդհանուր գործակիցը ՀՀ-ում, 1990-2019 թթ. (%)¹⁴

Ժողովրդագրական իրավիճակը նկարագրող ցուցանիշներից է ծնելիության ընդհանուր գործակիցը: Գծապատկեր 2-ից երևում է, որ այն ՀՀ-ում նվազել է 1990-2001 թթ.՝ 22.5%-ից հասնելով 10.0%-ի (ըստ հրապարակված վիճակագրական տվյալների ժամանակային շարքի, որն ընդգրկում է 1940-2019 թթ., սա գրանցված ամենացածր մակարդակն է¹⁵): Այն նորից աճել է 2002-2010 թթ. և անկում է ապրել հաջորդող տարիներին: Հարկավոր է նշել, որ մահացության մակարդակի տատանումներն ավելի փոքր են եղել¹⁶, հետևաբար գծապատկեր 3-ում ներկայացված բնական հավելաճի շարժընթացի ուղղությունն առավելապես պայմանավորված է ծնելիության փոփոխությամբ և համապատասխանում է դրա միտմանը:

Պետությունը, երեխայի ծննդյան միանվագ նպաստ սահմանելով, փորձում է խթանել ծնելիությունը: Մասնավորապես I և II երեխայի ծնվելու դեպ-

¹² Տե՛ս «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 29.01.2010 թ., ուժի մեջ է մտել 25.02.2010 թ.:

¹³ Տե՛ս «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թթ. ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 14.05.2020 թ., ուժի մեջ է մտել 19.06.2020 թ.:

¹⁴ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2020, էջ 145, ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2019, էջ 62:


¹⁵ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2005 թ. և 2019 թ. հրապարակումներ, համապատասխանաբար էջ 32 և 62: ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2020, էջ 145:

¹⁶ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2019, էջ 86:

քում նպաստի չափը կազմում է 300 հազ. ՀՀ դրամ, III և IV երեխայի ծնվելու դեպքում՝ 1 մլն ՀՀ դրամ, V և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1.5 մլն ՀՀ դրամ¹⁷: Բացի դրանից, պետական աջակցություն հատկացվում է նաև մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար¹⁸: Սրանք, իհարկե, անհրաժեշտ են, բայց ոչ բավարար. ծնելիության խթանման համար հարկավոր է ստեղծել աշխատելու և կայուն եկամուտ ստանալու պայմաններ, քանի որ երեխաների խնամքը, կրթությամբ ապահովելը երկարաժամկետ և համապատասխան ֆինանսական միջոցներ պահանջող գործընթաց է:

Սոցիալ-տնտեսական վատ պայմանները հանգեցրել են նաև արտագաղթին: Երկրից հեռացողների տարեկան ամենամեծ թիվն արձանագրվել է 1992-1994 թթ. (գծապատկեր 3): Թեև հաջորդող տարիներին միգրացիայի մնացորդը մեծ չափով կրճատվել է նշված ժամանակաշրջանում գրանցված ցուցանիշի նկատմամբ, սակայն այն շարունակում է բացասական լինել (2019 թ. ՀՀ-ից արտագաղթել է 16.0 հազ. մարդ): Հեռացողների գերակշիռ մասն աշխատանքային միգրանտներ են¹⁹ (հետևաբար գտնվում են աշխատունակ տարիքում), ինչը փոքրացնում է զարգացման ներուժը:

Ծնելիության մակարդակի անկման և արտագաղթի հետևանքով ՀՀ բնակչության թիվն աստիճանաբար կրճատվել է: ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների համաձայն՝ 2019 թ. տարեվերջին այն կազմել է 2.96 մլն մարդ (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ մշտական բնակչության թվի փոփոխության բաղադրիչները, 1990-2019 թթ.²⁰


¹⁷ Տե՛ս «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 06.03.2014 թ., ուժի մեջ է մտել 03.04.2014 թ., «ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 09.01.2020 թ., ուժի մեջ է մտել 01.07.2020 թ.:

¹⁸ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2014 թ. հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 29.12.2015 թ., ուժի մեջ է մտել 31.12.2015 թ.:

¹⁹ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2019, էջ 126:

²⁰ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2020, էջ 145, ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2019, էջ 39:

Ծնելիության անկումը և արտագաղթն իրենց հերթին բացասաբար են անդրադառնում ՀՀ տնտեսության վրա հատկապես նրանով, որ հանգեցնում են բնակչության ծերացմանը: Այսպես, եթե աշխատունակ տարիքի բնակչության կշիռն աճել է 1990-2010 թթ. (գծապատկեր 4)^{*} պայմանավորված նախորդ տարիներին գրանցված ծնելիության համեմատաբար բարձր մակարդակով^{*}, ապա ցուցանիշը հետագայում կրճատվել է ծնվածների թվի նվազման և արտագաղթի հետևանքով: Իրավիճակի կայուն և նշանակալի բարելավման բացակայության դեպքում կբարդանան աշխատանքային ռեսուրսների վերարտադրության խնդիրները:



Գծապատկեր 4. ՀՀ մշտական բնակչության տարիքային կառուցվածքը, 1990-2020 թթ., տարեկալին (%)²¹

Այսպիսով, սոցիալ-տնտեսական պայմանների և ժողովրդագրական իրավիճակի միջև կապը երկկողմանի է: ՀՀ-ում ցածր կենսամակարդակը հանգեցրել է բնակչության թվի, հետևաբար նաև աշխատանքային ռեսուրսների կրճատմանը, որը, իր հերթին, տնտեսական զարգացումը խոչընդոտող գլխավոր գործոններից է: Այս տեսանկյունից ավելի է մեծանում պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության կարևորությունը, քանի որ դա ներկայացված խնդիրների լուծման առանցքային միջոցներից է:

^{*} Որևէ տարվա ընթացքում ծնվածների ազդեցությունն աշխատունակ տարիքի բնակչության թվի վրա տեղի է ունենում ժամանակային լագով, քանի որ այդ տարիքը սկսվում է 15 տարեկանից:

²¹ Ըստ ՀՀ ՎԿ սահմանման՝ աշխատունակ տարիքն ընդգրկում է երկու միջակայք: Առաջինը ներկայացնում է 16-62 տ., որը հաճախ անվանում են «աշխատանքային տարիք»: Այն պայմանավորված է ՀՀ աշխատանքային օրենսգրքով և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի դրույթներով: Երկրորդը վերաբերում է 15-75 տ. և ներառում է նաև աշխատանքային տարիքից դուրս, սակայն տնտեսապես ակտիվ բնակչությանը: Երկու դեպքում էլ ներկայացված միտումն ըստ էության նույնն է: Միաժամանակ, քանի որ աշխատանքային ռեսուրսներն առավելապես համապատասխանում են երկրորդ ընտրանքին, ինչպես նաև՝ հետազոտված ժամանակաշրջանի համար ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների հիման վրա հնարավոր է առանձնացնել 15-74 տ. բնակչության թիվը, մեր կատարած հաշվարկներում, որպես աշխատունակ տարիքի բնակչություն, ներկայացված են 15-74 տ., աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, Ժողովրդագրական տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=209>, ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2005, էջ 23:

ՀՀ սոցիալական քաղաքականությունն ու դրա բարելավման ուղիները

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածում նշված է, որ ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է²²: Իհարկե, պետությունը սոցիալական քաղաքականության միջոցով մեղմում է տարբեր բնույթի հիմնահարցեր, սակայն այստեղ մի շարք խնդիրներ լուծված չեն: Անդրադառնանք ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի գլխավոր բաղադրիչներին:

Նպաստներ և կենսաթոշակներ

ՀՀ պետական բյուջեի ծախսերի շուրջ 29.5%-ը 2018 թ. կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները*: Իրենց հերթին, դրանց 30.7%-ը կազմել են նպաստները²³: Վերջիններն էական ազդեցություն ունեն աղքատության մակարդակի կրճատման առումով: Մասնավորապես, ըստ ՀՀ ՎԿ տվյալների, երեխաների 23.9%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որ ստանում են ընտանեկան նպաստ, և դրա վճարումը դադարեցնելու դեպքում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը 1.5%-ից կհասնի 7.0%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը՝ 29.2%-ից 33.7%-ի²⁴:

Սոցիալական ծախսերի շուրջ 69.3%-ը 2018 թ. կազմել են կենսաթոշակների գծով կատարված ծախսերը²⁵: Սրանք նույնպես մեծ նշանակություն ունեն աղքատության կրճատման հարցում: Այսպես, երեխաների 42.3%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որ առնվազն մեկ անդամը ստանում է կենսաթոշակ: Եթե այն հանվի տնային տնտեսությունների ընդհանուր ամսական ծախսերից, ապա մանկական ծայրահեղ աղքատության մակարդակը 1.5%-ից կհասնի 10.8%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակը՝ 29.2%-ից 41.5%-ի²⁶:

Թեև նպաստները և կենսաթոշակները նշանակալի ազդեցություն ունեն ՀՀ բնակչության կենսամակարդակի վրա, սակայն, դրանց չափի հետ կապված, առկա են մի շարք խնդիրներ: Ընդհանրապես, սոցիալական ապահովությանն ուղղվող գումարների հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում նվազագույն սպառողական զամբյուղը և աղքատության շեմը: Այս կապակցությամբ նախ նշենք, որ վերջինները թերազնահատված են ՀՀ-ում: Այսպես, նվազագույն սպառողական զամբյուղը ՀՀ ՎԿ-ն հաշվարկում է՝ պարենայինի արժեքը բազմապատկելով 1.77 գործակցով, որը ներկայացնում է 2009 թ. հարցումների արդյունքում բացահայտված սպառողական և պարենային զամբյուղների արժեքների հարաբերակցությունը: Հետևաբար, եթե նույնիսկ հաշվի չառնենք տարիների ընթացքում սպառման կառուցվածքի և գների մա-

²² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.:

* Իհարկե, տարբեր երկրների համեմատ, սա կարող է դիտարկվել որպես բարձր ցուցանիշ, սակայն հարկավոր է հաշվի առնել, որ գործազրկությունը և աղքատությունը զանգվածային բնույթ են կրում ՀՀ-ում, ինչով պայմանավորված՝ նույնիսկ այդ գումարները բավարար չեն:

²³ Տե՛ս ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն, 2018, http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/:

²⁴ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 111:

²⁵ Տե՛ս ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն, 2018, http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/:

²⁶ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 110:

կարդակի փոփոխության փաստը, այդ գործակիցը կարող է ցույց տալ գոյություն ունեցող իրավիճակը (բնակչության առնվազն 23.5%-ը չի կարողանում ապահովել նվազագույն սպառողական զամբյուղին համահունչ սպառում*), բայց ոչ մարդու բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ բարիքների և ծառայությունների նկատմամբ պահանջի նվազագույն չափը:

Բացի դրանից, ըստ ՀՀ ՎԿ հաշվարկների (հիմնված ՀՀ առողջապահության նախարարության մշակած չափանիշների վրա)՝ նվազագույն սպառողական զամբյուղը, օրինակ, 2018 թ. և 2019 թ. IV եռամսյակների միջին ընթացիկ գներով, կազմել է շուրջ 61000 ՀՀ դրամ, իսկ ոչ պարենային զամբյուղը՝ 26000 ՀՀ դրամ²⁷: Գները սովորաբար բարձրանում են, և բնակարանների ջեռուցման անհրաժեշտություն է առաջանում տարվա նշված ժամանակահատվածում: Հետևաբար, այս գումարները բավարար չեն անձի նվազագույն պահանջմունքները լիարժեքորեն բավարարելու համար (դրանք վերագնահատելու նպատակով տնտեսագետների և բժիշկների կողմից համատեղ իրականացվող լրացուցիչ հետազոտական աշխատանքներ են հարկավոր):

Ինչ վերաբերում է աղքատության վերին շեմին (ըստ սպառման ագրեգատի), ապա այն 2018 թ. կազմել է 42621 ՀՀ դրամ²⁸, որը ցածր է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից: Բացի դրանից, ծայրահեղ աղքատության* գիծը նույն թվականին կազմել է 24827 ՀՀ դրամ²⁹ և փոքր է պարենային զամբյուղի արժեքից (վերջինը 2018 թ. կազմել է շուրջ 34600 ՀՀ դրամ³⁰): Այս կապակցությամբ նշենք, որ համաձայն ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների՝ 2016-2018 թթ. թերսնվածության տարածվածությունը ՀՀ-ում միջինում կազմել է 2.7%³¹, որը շուրջ 2.0 անգամ գերազանցում է ՀՀ ՎԿ-ի կողմից նշված ժամանակաշրջանում ներկայացված ծայրահեղ աղքատության մակարդակի ցուցանիշը³²:

Վերադառնալով կենսաթոշակներին՝ ու նպաստներին՝ նույնիսկ դրանց միջին չափը 2018 թ. փոքր է եղել թերագնահատված նվազագույն սպառողական զամբյուղից և աղքատության վերին շեմից: Այսպես, կենսաթոշակի և անգամ մեկ ընտանիքի* ամսական նպաստի միջին չափը կազմել է համապատասխանաբար 40478 ՀՀ դրամ³³ և 31350 ՀՀ դրամ³⁴: Հարկավոր է նշել, որ

* Ցուցանիշը ներկայացնում է 2018 թ. ՀՀ-ում արձանագրված աղքատության մակարդակը, որի գնահատման համար կիրառվող վերին շեմը ցածր է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից:

²⁷ Տե՛ս ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2019, էջ 249, ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2020, էջ 253:

²⁸ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 40:

* Ծայրահեղ աղքատությունը կոչվում է նաև «պարենային աղքատություն»:

²⁹ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 40:

³⁰ Տե՛ս ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-մարտին, Եր., 2018, էջ 350, ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-հունիսին, Եր., 2018, էջ 295, ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-սեպտեմբերին, Եր., 2018, էջ 199, ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2019, էջ 249:

³¹ Տե՛ս Food and Agriculture Organization of the United Nations, FAOSTAT, <http://www.fao.org/faostat/en/#country/1>:

³² Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 42:

* Տնային տնտեսության միջին չափը ՀՀ-ում 2018 թ. կազմել է 3.4 մարդ, Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 30-31:

³³ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2019, էջ 106:

2020 թ. հունվարի 1-ից սոցիալական վճարների չափը բարձրացել է միջինում 10%-ով³⁵, որի բացարձակ արժեքը, սակայն, չնչին գումար է կազմում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ակնհայտ է, որ սոցիալական ապահովության գումարների նվազագույն չափը խիստ ցածր է: Այսպես, ընտանեկան նպաստի բազային մասը կազմում է 18000 ՀՀ դրամ³⁶, իսկ նվազագույն կենսաթոշակը՝ 26500 ՀՀ դրամ³⁷: Վերջինը սահմանվել է ծայրահեղ աղքատության գծի շրջանակում՝ դրա հաղթահարման նպատակով: Այս առումով հարկավոր է նշել, որ եկամտի սպառումը կրում է ոչ միայն անհատական, այլև ընտանեկան բնույթ, ինչով պայմանավորված՝ այդ քաղաքականության ազդեցությունը նվազում է (հատկապես բազմանդամ ընտանիքների համար):

Կարծում ենք, որ այս համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաև ՀՀ-ում գործազրկության նպաստի բացակայության խնդրին: ՀՀ Ազգային ժողովը 2013 թ. դեկտեմբերի 11-ին ընդունել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը³⁸: Դրա ընդունմամբ դադարեցվեց գործազրկության նպաստի տրամադրումը, ինչը հիմնականում պատճառաբանվել է նրանով, որ վերջինը պասիվ քաղաքականության մոտեցում է, որի հետևանքով գործազուրկների շրջանում նվազում է աշխատելու ցանկությունը: Այս առումով պետք է նշել, որ նպաստների տրամադրումն ու ակտիվ սոցիալական քաղաքականությունը փոխբացառող երևույթներ չեն, իսկ աշխատանքը կորցրած բնակչությանը սոցիալական անվտանգությամբ ապահովելը պետության խնդիրներից է:

Բացառված չէ, որ գործազրկության նպաստը որոշ մարդկանց դեպքում կարող է նվազեցնել աշխատելու ցանկությունը, սակայն պետք է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք: Նախ՝ դրա միջին չափը ՀՀ-ում 2013 թ. կազմել է 16237 ՀՀ դրամ³⁹, որը կազմում էր տվյալ տարվա չորս եռամսյակների համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված չափանիշների հիման վրա հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքների շուրջ 29.0%-ը⁴⁰ և չէր կարող բավարարել նույնիսկ հիմնական պահանջմունքները: Բացի դրանից, վերջիններն անընդհատ աճում են, հետևաբար, հասնելով դրանց բավարարման մի մակարդակի, մարդիկ սովորաբար փորձում են անցնել հաջորդին: Տեղին է նշել նաև, որ շատերն իրենց կենսամակարդակը դիտարկում են համեմատության մեջ (մյուսներից աղքատ են, թե՛ հարուստ): Սրանք առաջացնում են աշխատելու և բարեկեցության առավել բարձր աստիճանի հասնելու ձգտում:

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 107:

³⁵ Տե՛ս «ՀՀ Կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թ. դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 26.12.2019 թ., ուժի մեջ է մտել 01.01.2020 թ.:

³⁶ ՀՀ Կառավարության N 50-Ն որոշում, ընդունվել է 24.01.2019 թ., ուժի մեջ է մտել 12.02.2019 թ.:

³⁷ Տե՛ս «ՀՀ Կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թ. դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 26.12.2019 թ., ուժի մեջ է մտել 01.01.2020 թ.:

³⁸ Տե՛ս «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 11.12.2013 թ., ուժի մեջ է մտել 01.01.2014 թ.:

³⁹ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2018, էջ 101:

⁴⁰ Տե՛ս ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-մարտին, Եր., 2013, էջ 306, ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-հունիսին, Եր., 2013, էջ 355, ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-սեպտեմբերին, Եր. 2013, էջ 200, ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2014, էջ 250:

Միաժամանակ, մարդիկ աշխատում են ոչ միայն եկամուտ ստանալու, այլև մյուսների հետ շփվելու, աշխատանքային փորձ և կարողություններ ձեռք բերելու, մասնագիտական համայնքի անդամ դառնալու նպատակով: Սրանք ոչ եկամտային գործոններ են, որոնք դրդում են փնտրել աշխատանք: Ուստի գործազրկության նպաստի տրամադրման դադարեցումը նպատակահարմար չէր, և այն կարող է գործել զբաղվածության ապահովման առկա ծրագրերի հետ միասին:

Նվազագույն աշխատավարձ

ՀՀ-ում թերի է իրականացվում ոչ միայն նպաստ և կենսաթոշակ ստացողների, որոնց մեծ մասը վարձու աշխատանք չի կատարում, այլև զբաղվածների սոցիալական պաշտպանությունը: Այսպես, համաձայն Սոցիալական իրավունքի եվրոպական հանձնաժողովի ներկայացրած «Նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագրի»՝ նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցության ընդունելի շեմ է 50-60%-ը⁴¹: ՀՀ-ում ցուցանիշը ցածր է նույնիսկ նշված ստորին մակարդակից և 2019 թ. կազմել է շուրջ 42.0%*: Բացի դրանից, թեև ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձը բարձր է աղքատության վերին շեմից (2015-2019 թթ. կազմել է 55000 ՀՀ դրամ⁴², իսկ 2020 թ. հունվարի 1-ից բարձրացել է՝ կազմելով 68000 ՀՀ դրամ⁴³), սակայն աշխատողների աղքատությունը հաղթահարված չէ⁴⁴: Վերջինը պայմանավորված է բազմանդամ ընտանիքի սպառման համար անհրաժեշտ աշխատավարձի ցածր մակարդակով: Այստեղ հարկավոր է նշել նաև, որ սա բարդացնում է մարդկային կապիտալի զարգացման խնդիրները, քանի որ եկամտի ոչ բավարար չափը նվազեցնում է որակյալ կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիությունը⁴⁵:

Իհարկե, մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ նվազագույն աշխատավարձի բարձրացումը կարող է հանգեցնել գործազրկության մակարդակի աճին: Այս կապակցությամբ, սակայն, հարկավոր է հաշվի առնել, որ վերջինը ՀՀ-ում պայմանավորված է հատկապես տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրներով, տարածքային անհամաչափ զարգացմամբ և աշխատողների շահագործմամբ (թողարկման ծավալների ընդլայնմանը զուգահեռ աշխատաժամերի՝ առանց համապատասխան վարձատրության ավելաց-

⁴¹ Տե՛ս The European Committee of Social Rights, Digest of The Case Law of the European Committee of Social Rights, 2018, էջ 85:

* Հաշվարկել ենք՝ կիրառելով զուտ աշխատավարձերի արժեքները: Հաշվարկներում օգտագործված եկամտային հարկի արդյունավետ դրույքաչափը տե՛ս **Գ. Պետրոսյան**, Ներքին կայուն արարների արդյունավետության բարձրացումը որպես արտաքին շուկերի նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիությունը նվազեցնող գործոն, Регион и мир, 2018, N 2, էջ 67, Սոցիալական վճարի չափը տե՛ս «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 21.06.2018 թ., ուժի մեջ է մտել 01.07.2018 թ., Դրոշմանիշային վճարների չափը տե՛ս «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 15.12.2016 թ., ուժի մեջ է մտել 09.01.2017 թ., հոդված 12:

⁴² Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2019, էջ 108:

⁴³ Տե՛ս «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 19.11.2019 թ., ուժի մեջ է մտել 01.01.2020 թ.:

⁴⁴ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 57:

⁴⁵ Նվազագույն աշխատավարձի դերը (ծայրահեղ աղքատության կրճատման միջոցով) մարդկային կապիտալի զարգացման գործում տե՛ս **Ֆ. Մայիլյան**, Մարդկային կապիտալի իրացման հիմնախնդիրները ՀՀ-ում (մենագրություն), Եր., 2018, էջ 238:

մամբ), որը նույնպես խոչընդոտում է նոր աշխատատեղերի ստեղծումը⁴⁶: Հետևաբար, կարծում ենք, որ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի աստիճանական աճի պատճառով աշխատանքի շուկայում էական տատանումներ չեն առաջանա:

Այսպիսով, անհրաժեշտ է վերանայել նվազագույն աշխատավարձի, միաժամանակ նաև նվազագույն սպառողական զամբյուղի, աղքատության շեմի, կենսաթոշակների ու նպաստների հաշվարկման մեխանիզմները՝ ուղեցույց դիտարկելով «Հիմնական պահանջմունքների բավարարման» մոտեցումը (գրականության մեջ հայտնի է “Basic needs approach” անվամբ⁴⁷), ինչը դեռևս լիարժեքորեն չի կատարվում ՀՀ-ում*: Հիմնականների շարքին են դասվում պահանջմունքը սննդի, մաքուր ջրի, հագուստի, հանրային փոխադրամիջոցների, կրթության, առողջապահական ծառայությունների, բնակարանային ապահովվածության նկատմամբ: Ըստ նշված հայեցակարգի՝ աղքատության հաղթահարման տեսանկյունից դրանց բավարարումն առաջնահերթություն է:

Միաժամանակ, հարկավոր է ոչ միայն հաղթահարել աղքատությունը, այլև նպաստավոր պայմաններ ստեղծել բարեկեցության բարձր մակարդակի հասնելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել նաև «Կարողությունների և հնարավորությունների զարգացման» մոտեցումը (գրականության մեջ հայտնի է “Capability approach” անվամբ⁴⁸), որում հատկապես կարևորվում է կյանքի որակի շարունակական աճն ու մարդկային կայուն զարգացումը:

Սոցիալական ապահովագրություն

Սոցիալական ապահովությունից բացի, զարգացած երկրներում գործում է նաև սոցիալական ապահովագրության համակարգը: Դրա տեսակներից են գործազրկության և առողջության պարտադիր ապահովագրությունը: ՀՀ-ում գործազրկության նպաստի բացակայության խնդիրը ներկայացրել ենք «Նպաստներ և կենսաթոշակներ» ենթահարցի մեջ, ուստի այստեղ կանդիդատականք առողջության ապահովագրությանը: Բարեկեցության բարձր մակարդակ ունեցող երկրներում այն սովորաբար համատարած բնույթ ունի և ֆինանսավորվում է ինչպես ապահովագրվողների ու գործատուների, այնպես էլ պետության կողմից: Ի տարբերություն այս երկրների՝ ՀՀ-ում առողջության պարտադիր ապահովագրությունը գործում է միայն քաղաքացիական ծառայողների շրջանում⁴⁹: Հաշվի առնելով աղքատության բարձր մակարդակը՝ հա-

⁴⁶ Տե՛ս **Ս. Մարգարյան**, Զանգվածային գործազրկության պատճառներն ու դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում, Ֆինանսներ և էկոնոմիկա, N 7-8 (203-204), Եր., 2017, էջ 84-93:

⁴⁷ Տե՛ս **ILO, with an introduction by James P. Grant**, Employment, Growth and Basic Needs: A One-World Problem, Praeger Publishers, New York, 1977, էջ 31-43:

* Իհարկե, ՀՀ ՎԿ-ն հրապարակում է նաև բազմաչափ աղքատության մակարդակը, որի հաշվարկման հիմքում բնակչության հիմնական կարիքների գնահատականներն են: Միաժամանակ, ըստ հրապարակման, 2018 թ. այն կազմել է 23.6%, որը սպառման ագրեգատի միջոցով հաշվարկված աղքատության մակարդակից տարբերվում է ընդամենը 0.1 տոկոսային կետով: Այս առումով, կարծում ենք, որ ցուցանիշը և դրա բաղադրիչները վերանայման կարիք ունեն:

⁴⁸ Տե՛ս **Sen A.**, Development as Freedom, Oxford University Press, 2001, մասնավորապես 4-րդ գլուխ, **Sen A.**, From Income Inequality to Economic Inequality, Southern Economic Journal, 1997, 64 (2), էջ 392 - 395:

⁴⁹ Տե՛ս «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N

սարակության անդամների զգալի մասը ՀՀ-ում հնարավորություն չունի սեփական միջոցներով ձեռք բերելու ապահովագրության այս տեսակը:

ՀՀ Կառավարության 2004 թ. մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ հաստատված է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկը, որոնց տրամադրվում է անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում⁵⁰: Միաժամանակ սա բավարար չէ, քանի որ, ըստ ՀՀ ՎԿ տվյալների, ֆինանսական վատ վիճակը շարունակում է առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառներից մեկը լինել⁵¹:

Հետևաբար, հարկավոր է մշակել խնդրի լուծման նաև այլ ուղիներ: Այսպես, կարող է ստեղծվել համավճարի սկզբունքով գործող առողջության ապահովագրության համակարգ, որտեղ պետության կողմից կֆինանսավորվի ապահովագրավճարների մի մասը: Միաժամանակ կարելի է դիտարկել նաև գործատուների կողմից համաֆինանսավորման հնարավորությունը, սակայն, ոչ ֆորմալ զբաղվածության աճի ռիսկերից խուսափելու նպատակով, դա անհրաժեշտ է իրականացնել միայն համապատասխան պայմանների և վերահսկողության մեխանիզմների առկայության դեպքում: Սկզբնական շրջանում ապահովագրությունը կարող է լինել կամավոր, իսկ երկարաժամկետում՝ պարտադիր, ինչը մասշտաբից տնտեսման էֆեկտի շնորհիվ հնարավորություն կտա նվազեցնելու ծախսերը, հետևաբար՝ նաև դրա գինը:

Իհարկե, ՀՀ-ում քննարկվում է առողջության համապարփակ ապահովագրության հարցը, սակայն ներկայացված նախագիծն ունի մի շարք խնդրահարույց կողմեր: Մասնավորապես առաջարկվում է, ներդրման պահից սկսած, այն իրականացնել պարտադիր սկզբունքով, ինչպես նաև ներմուծել «առողջության հարկ»՝ աշխատավարձի 6.0%-ի չափով⁵²: Այս առնչությամբ կարծում ենք, որ հարկավոր է վերանայել առաջարկվող համակարգի գործունեության սկզբունքներն ու եղանակները, քանի որ այն կարող է հանգեցնել ոչ ֆորմալ զբաղվածության աճին, պետության եկամուտների կրճատմանը, հետևաբար նաև ապահովագրության համակարգի ֆինանսավորման և դրա բնականոն աշխատանքի խաթարմանը:

Այսպիսով, թեև ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալ-շուկայական տնտեսությունն է, սակայն այստեղ նույնիսկ անապահովության գնահատման համակարգում առկա են մի շարք խնդիրներ: Բացի դրանից, պետությունը դեռևս չի կարողանում բնակչությանն ապահովել հիմնական պահանջմունքների լիարժեք բավարարման համար անհրաժեշտ կենսաթոշակներով, նպաստներով և նվազագույն աշխատավարձով: Իրավիճակի բարելավումը լրացուցիչ ֆինանսական միջոցներ պահանջող, երկարաժամկետ, բարդ, գու-

1923-Ն, ինչպես նաև 2012 թ. ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 27.12.2012 թ., ուժի մեջ է մտել 07.02.2013 թ.:

⁵⁰ Տե՛ս «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 04.03.2004 թ., ուժի մեջ է մտել 08.04.2004 թ.:

⁵¹ Տե՛ս ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2019, էջ 150:

⁵² Տե՛ս «ՀՀ-ում առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ (հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում), <https://www.e-draft.am/projects/2137/about>:

ցե նաև փուլային գործընթաց է, որի իրագործումը, սակայն, առաջնահերթություն է:

Սոցիալական ծախսերի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրները

Հոդվածում ներկայացված հիմնախնդիրների լուծումը ենթադրում է հավելյալ սոցիալական ծախսերի իրականացում: Դրանց կոնկրետ չափը գնահատելու համար, սակայն, հարկավոր է կատարել լրացուցիչ հետազոտություններ (ինչպես տնտեսագիտական, այնպես էլ մարդու առողջական կարգավիճակին վերաբերող): Միաժամանակ նշենք, որ այդ ծախսերի ֆինանսավորման նպատակով առանձնացվում են հետևյալ հիմնական ուղղությունները. հարկային դրույքաչափերի փոփոխություն, ստվերային տնտեսության կրճատում և պետական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում: Կարևորելով նշվածներից յուրաքանչյուրը և դրանց բոլոր բաղադրիչները՝ որպես օրինակ կքննարկենք ՀՀ-ում եկամտային հարկի պրոգրեսիվության և սոցիալական ծախսերի հասցեականության ապահովման միջոցով ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացման հարցը:

Այսպես, 2020 թ. հունվարի 1-ից փոխվել է եկամտային հարկի դրույքաչափը. եթե նախկինում այն աճում էր եկամտի ավելացմանը զուգընթաց, ապա հարկման բազայի բոլոր մակարդակների համար այժմ կազմում է 23.0%⁵³: Կարծում ենք, որ եկամտային անհավասարության բարձր մակարդակ ունեցող երկրում համահարթ դրույքաչափի կիրառումը նպատակահարմար չէ: Հետևաբար, հարկավոր է վերանայել այն՝ դարձնելով պրոգրեսիվ: Բարեփոխումների արդյունքները զգալի կլինեն հատկապես սոցիալական ոլորտում, քանի որ ոչ միայն կպահպանվի արդարության սկզբունքը, այլև կավելանան պետական բյուջեի եկամուտները, որոնք կարող են ուղղվել համապատասխան խնդիրների լուծմանը:

Միաժամանակ կարևորում ենք ոչ միայն հարկային մուտքերի ավելացումը, այլև սոցիալական ծախսերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը, ինչի հետ կապված հիմնախնդիրները դեռևս լուծված չեն ՀՀ-ում: Իրավիճակի բարելավման նախապայմանը սոցիալական պաշտպանության և անապահովության գնահատման համակարգի շարունակական կատարելագործումն է: Կարծում ենք, որ հոդվածում ներկայացված «Հիմնական պահանջումների բավարարման» և «Կարողությունների ու հնարավորությունների զարգացման» մոտեցումների կիրառությունը կարող է ծառայել այդ նպատակին, քանի որ թույլ կտա առավել հասցեական թիրախավորել շահառուներին, ինչի արդյունքում խնայված միջոցները կարող են ուղղվել ծախսերի ֆինանսավորմանը:

Եզրակացություններ

Հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները:

1. Տնտեսական զարգացումը պայմանավորող գլխավոր գործոններից են երկրի ժողովրդագրական իրավիճակը և աշխատանքային ռեսուրսների առկայությունը: Միաժամանակ գործում է նաև հակադարձ կապ, և վերջիններն իրենց հերթին կրում են կյանքի որակի ազդեցությունը:

⁵³ Տե՛ս ՀՀ N ՀՕ-68-Ն օրենք, ընդունվել է 25.06.2019 թ., ուժի մեջ է մտել 01.01.2020 թ., հոդված 35:

2. Հետազոտությունները ցույց են տալիս, որ թեև ազատ շուկայական հարաբերություններն առանցքային նշանակություն ունեն տնտեսական առաջընթացի համար, սակայն ներառական և կայուն զարգացման տեսանկյունից պետական կարգավորումն անհրաժեշտություն է:

3. Սոցիալ-տնտեսական հիմնահարցերը բացասաբար են ազդել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա: Ծնելիության մակարդակի անկման և արտագաղթի հետևանքով բնակչության թիվը կրճատվել է, որը շարունակվելու դեպքում կբարդանան աշխատանքային ռեսուրսների վերարտադրության և տնտեսության զարգացման խնդիրները:

4. ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը թերազնահատված է: Հոդվածում առաջադրվել են փաստարկներ, համաձայն որոնց՝ այն բավարար չէ բնականոն կենսագործունեությանն անհրաժեշտ նվազագույն պահանջները լիարժեքորեն բավարարելու համար:

5. Աղքատության վերին շեմը ՀՀ-ում ցածր է նույնիսկ թերազնահատված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից, իսկ պարենային կամ ծայրահեղ աղքատության գիծը՝ պարենային զամբյուղի արժեքից: Սա նորմատիվային իմաստով անընդունելի է:

6. ՀՀ-ում տրամադրվող նպաստների և կենսաթոշակների միջին չափը փոքր գումար է կազմում և չի կարող բավարարել բնակչության հիմնական պահանջմունքները: Ինչ վերաբերում է սոցիալական ապահովության գումարների նվազագույն չափին, ապա դրանով դժվար է հաղթահարել նույնիսկ ծայրահեղ աղքատությունը:

7. Գործազրկության նպաստի տրամադրման կասեցումը նպատակահարմար չէր: Հոդվածում բերված հիմնավորումները վկայում են, որ նպաստի այս տեսակը և ակտիվ սոցիալական քաղաքականությունը ոչ թե փոխբացառող երևույթներ են, այլ, ընդհակառակը, լրացնում են միմյանց:

8. ՀՀ-ում թերի է իրականացվում նաև զբաղվածների սոցիալական պաշտպանությունը. նվազագույն աշխատավարձի մակարդակը ցածր է, ինչը բացասաբար է անդրադառնում աշխատողների և նրանց ընտանիքների կենսամակարդակի վրա:

9. ՀՀ Կառավարությունը բնակչության սոցիալապես անապահով և առանձին խմբերին առողջապահական ծառայություններից օգտվելու համար տրամադրում է օժանդակություն: Միաժամանակ, դա բավարար չէ, քանի որ, ըստ ՀՀ ՎԿ տվյալների, ֆինանսական վատ վիճակն առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառներից է:

Հիմնվելով վերոնշյալ եզրակացությունների վրա՝ առաջարկում ենք.

1. Վերականգնել գործազրկության նպաստի տրամադրումը, քանի որ դա աշխատանքը կորցրած բնակչությանը սոցիալական անվտանգությամբ ապահովելու գլխավոր միջոցներից է:

2. Վերանայել նվազագույն սպառողական զամբյուղի, աղքատության շեմի, նպաստների, կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձի հաշվարկման մեխանիզմները՝ ուղեցույց դիտարկելով «Հիմնական պահանջմունքների բավարարման» և «Կարողությունների ու հնարավորությունների զարգացման» մոտեցումների զուգակցումը:

3. Ստեղծել համավճարի սկզբունքով գործող առողջության ապահովագրության համակարգ: Պետության (համապատասխան պայմանների առկա-

յության դեպքում հնարավոր է նաև գործատուների) կողմից կարող է ֆինանսավորվել ապահովագրավճարների մի մասը, ինչը կբարձրացնի որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Հաշվի առնելով սոցիալ-տնտեսական ներկա պայմանները՝ սկզբնական շրջանում այն կարող է լինել կամավոր, իսկ երկարաժամկետում՝ պարտադիր:

4. Աճող սոցիալական ծախսերի ֆինանսավորման նպատակով վերանայել հարկային քաղաքականությունը: Մասնավորապես անհրաժեշտ է ապահովել եկամտային հարկի պրոգրեսիվությունը, քանի որ եկամտային անհավասարության ներկա պայմաններում համահարթ դրույքաչափի կիրառությունը նպատակահարմար չէ:

Օգտագործված գրականություն

1. Մայիլյան Ֆ., Մարդկային կապիտալի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Եր., 2018:
2. Մարգարյան Ս., Ձանգվածային գործազրկության պատճառներն ու դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում, Ֆինանսներ և էկոնոմիկա, N7-8 (203-204), Եր., 2017:
3. Պետրոսյան Գ., Ներքին կայուն արարների արդյունավետության բարձրացումը որպես արտաքին շուկերի նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիությունը նվազեցնող գործոն, Регион и мир, 2018, N 2:
4. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 06.03.2014 թ., ուժի մեջ է մտել 03.04.2014 թ.:
5. «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թթ. ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 14.05.2020 թ., ուժի մեջ է մտել 19.06.2020 թ.:
6. «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 29.01.2010 թ., ուժի մեջ է մտել 25.02.2010 թ.:
7. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 11.12.2013 թ., ուժի մեջ է մտել 01.01.2014 թ.:
8. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 21.06.2018 թ., ուժի մեջ է մտել 01.07.2018 թ.:
9. «ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 09.01.2020 թ., ուժի մեջ է մտել 01.07.2020 թ.:
10. «ՀՀ Կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թ. դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 26.12.2019 թ., ուժի մեջ է մտել 01.01.2020 թ.:
11. ՀՀ Կառավարության N 50-Ն որոշում, ընդունվել է 24.01.2019 թ., ուժի մեջ է մտել 12.02.2019 թ.:

12. «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 15.12.2016 թ., ուժի մեջ է մտել 09.01.2017 թ.:
13. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ.:
14. «ՀՀ-ում առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ (հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում), <https://www.e-draft.am/projects/2137/about>:
15. ՀՀ N ՀՕ-68-Ն օրենք, ընդունվել է 25.06.2019 թ., ուժի մեջ է մտել 01.01.2020 թ.:
16. «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2014 թ. հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 29.12.2015 թ., ուժի մեջ է մտել 31.12.2015 թ.:
17. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 19.11.2019 թ., ուժի մեջ է մտել 01.01.2020 թ.:
18. «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 04.03.2004 թ., ուժի մեջ է մտել 08.04.2004 թ.:
19. «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, ՀՀ Կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թ. ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության որոշում, ընդունվել է 27.12.2012 թ., ուժի մեջ է մտել 07.02.2013 թ.:
20. ՀՀ պետական բյուջեի հաշվետվություն, 2018, http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/:
21. ՀՀ ՎԿ, Աշխատանքի շուկան ՀՀ-ում, Եր., 2019:
22. ՀՀ ՎԿ, Ժողովրդագրական տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=209>:
23. ՀՀ ՎԿ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., 2005 թ., 2006 թ. և 2019 թ. հրապարակումներ:
24. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2020:
25. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2019:
26. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-սեպտեմբերին, Եր., 2018:
27. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-հունիսին, Եր., 2018:
28. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-մարտին, Եր., 2018:
29. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2014:
30. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-սեպտեմբերին, Եր., 2013:

31. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-հունիսին, Եր., 2013:
32. ՀՀ ՎԿ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-մարտին, Եր., 2013:
33. ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2004 թ. և 2019 թ. հրապարակումներ:
34. ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2018 թ. և 2019 թ. հրապարակումներ:
35. Buchanan J., Prize Lecture, The Constitution of Economic Policy, 1986, http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1986/buchanan-lecture.html.
36. Lewis A., Economic Development with Unlimited Supplies of Labour, The Manchester School, 1954, Vol. 22, No. 2.
37. Ranis G., Fei J., A Theory of Economic Development, The American Economic Review, 1961, Vol. 51, No. 4.
38. Reinhart M. Carmen, Rogoff S. Kenneth, This Time is Different, Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, 2009.
39. Sachs J., The Debt Overhang of Developing Countries, in R. Findlay (ed.), Debt, Stabilization and Development: Essays in Memory of Carlos F. Diaz-Alejandro, Oxford: Blackwell, 1989.
40. Sachs J., Theoretical Issues in International Borrowing, Princeton Studies in International Finance, Princeton University, 1984, No. 54.
41. Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001.
42. Sen A., From Income Inequality to Economic Inequality, Southern Economic Journal, 1997, 64 (2).
43. Stiglitz J., The Price of Inequality, Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012.
44. Eurostat, https://ec.europa.eu/eurostat/tgm/table.do?tab=table&plugin=0&language=en&pcode=tps00014&fbclid=IwAR1oKB2DYj0XEcND6te-axE-33Mm_d2BQucV3zLnvsBmoBsCHCH9-wUjTUY.
45. Food and Agriculture Organization of the United Nations, FAOSTAT, <http://www.fao.org/faostat/en/#country/1>.
46. ILO, Employment, Growth and Basic Needs: A One-World Problem, Praeger Publishers, New York, 1977.
47. The European Committee of Social Rights, Digest of The Case Law of the European Committee of Social Rights, 2018.

САМВЕЛ МАРГАРЯН

Ассистент кафедры экономической теории АГЭУ,
старший специалист управления макроэкономической политики
Министерства финансов РА, кандидат экономических наук

Текущая демографическая ситуация Республики Армения и проблемы социальной политики.

В статье проанализирован вопрос сокращения численности населения Республики Армения. В этом контексте выделены проблемы, связанные с социальной политикой и предлагаются пути их решения. В частности, используя в качестве ориентира сочетание подходов “Удовлетворение основных потребностей” и “Развитие возможностей”, автор предлагает пересмотреть механизмы расчета минимальной потребительской корзины, черты бедности, минимальной заработной платы, пенсий и пособий. В статье приведены аргументы в пользу того, что прекращение выплаты пособия по безработице было нецелесообразным, и что оно может совмещаться с программами активной социальной политики. Кроме того, в целях расширения доступности медицинских услуг, предложены возможные варианты внедрения системы медицинского страхования, действующей по принципу совместной оплаты. С точки зрения финансирования растущих социальных расходов, обсуждена необходимость повышения их адресности и введения прогрессивной шкалы подоходного налога.

Ключевые слова: уровень жизни, рождаемость, эмиграция, численность населения, экономическое развитие, социальная политика, подоходный налог.

JEL: J11, O15, H55, H21

SAMVEL MARGARYAN

Assistant Professor at the Chair of Economic Theory at ASUE,
Senior Specialist at Macroeconomic Policy Department
of the Ministry of Finance of the RA, PhD in Economics

Current Demographic Situation in Armenia and Social Policy Issues.

This paper analyzes the issue of population decline in the Republic of Armenia, discusses related social policy challenges, and proposes ways to overcome them. In particular, the author recommends to review the mechanisms of assessing the minimum consumer basket, the poverty line, the minimum wage, pensions and benefits, using the integration of “Basic needs” and “Capability” approaches as a guideline. The paper provides evidence supporting the idea that the termination of unemployment benefits was inappropriate, and that they could have worked in conjunction with the active social policy

programs. Besides, in order to ensure broad access to health care services, possible options are discussed for the introduction of a health insurance system on co-payments basis. Intending to finance the increasing social expenditures, the necessity is emphasized to introduce the progressivity of income tax and to assure more efficient targeting of social expenses.

Key words: *standard of living, birth rate, emigration, population, economic development, social policy, income tax.*

JEL: J11, O15, H55, H21